

նակը կարճացած է ուրիշ եղանակաւ մը՝ զոր գտաւ Քալմէզդէ՝ բակտերիաբանական հիմնարկութեան վարիչն ի Վայկոն: Ասոր էութիւնն այն է որ փոխանակ բնական եղանակի՝ արուեստական եղանակաւ կը խմորի. այսինքն բորբոսով (*aspergillus*). այս բորբոսը կը սպաննէ Չանտուին վրայ իբրեւ մակարոյս (*parasite*) սնանող նուրբ բակիլըն (*bacillus subtilis*), որ բնական խմորումը կ'երկարէ: Հազիւ թէ մակարոյսն կը ջնջուի, ահա խմորումն այնպիսի արագ ընթացք կը բռնէ, որ 2 մինչեւ 3 ամսուան մէջ բաղձացուած աստիճանին կը հասնի. ուստի յառաջուանէն գոնէ 9 ամիս յառաջ: Եթէ նկատողութեան առնունք այն դրամագրուելը զոր կը մատակարարէ ափիոնի տարեկան հունձքը, յայտնի կը տեսնուի որ նշանաւոր շահ յառաջ կը բերէ:

Ծխելու պատրաստ ըլլալէն ետեւ՝ ափիոնը տփիկներու մէջ լեցուած՝ ի վաճառ կը հանուի: Սակայն վաճառականք զայն անարատ ու անխառն չեն թողոր, այլ գաճ, այլեւայլ պտղոց թանձրացած հիւթեր, եւ մանաւանդ Ֆլէս (*mélasse*) կը խառնեն: Բարեբախտաբար այս յաւելուածքն առողջութեան շատ չեն վնասեր: Ոմանք իրենց Չանտուին աւելի հաճոյական համ տալու համար անուշահոտ եւ համեղ փայտի մը կտորուանքն ալ մէջը կը խառնեն, որուն քիլոկրամը մինչեւ 300 ֆրանք կ'արժէ: —

Այժմ ճենաց ափիոն ծխելու կազմածքներուն վրայ խօսելով՝ նախ ծխափողէն կը սկսինք: Ասիկայ 50 մինչեւ 60 սանդիմեզր երկայնութեամբ եւ 1 սանդիմեզր տրամագծով հնդկական եղէգ (*bambou*) մըն է: Եղէգին փակ ծայրին վրայ ծակ մը կայ, ուր ծխափողի վառարան (է-է) անցուած է՝ այրած մանրամաղ հողէ շինուած. ասի այլեւայլ ձեւով կրնայ ըլլալ, եւ յատակին վրայ նեղ ձեղքուած մը կայ, որով հնդկեղէգին սնամէջ միջոցին հետ հաղորդակցութիւն ունի: Ճենացին երկայն ունելիքով մ'անթէն որոշ քանակութեամբ Չանտու առնով (սովորաբար 15—20 հրկրմ.) ճրագի մը բոցին առջեւ կը բռնէ գնդակը չորցընելու եւ վառելու. եւ յետոյ ափիոնի ծխափողին փոքր գլխուն մէջ դնելու համար: Յառաջագոյն ճենացին քիչ մը բարձր սեղանի մ'առջեւ կը նստէր, որուն վրայ կը գտնուէին ծխելու մանրակազմածքը. օրինակի աղագաւ պատրաստական վառարանք՝ հետզհետէ փոխելու համար. քերիչ՝ մաքրելու համար. ափիոնի անթ, ունելիք, ջրով լի անթ մը փողը մա-

քրելու համար. կշիռ մը՝ մէկ նստով սպառած քանակութիւնը չափելու համար. եւ վերջապէս Բուդայի մէկ անդրին որմէ կը խնդրէր ծխողը՝ որ քաղցր քուն շնորհէ իրեն:

Արդի ժամանակս նստարանի կամ բազմոցի վրայ կ'ընկողմանին, այս դիրքն ծխափողը ձեռաց մէջ բռնելու, բայց ի մասնաւորի ծխելուն վրայ իսկոյն յաջորդող անոյշ քունը հեշտեւ վայելելու շատ յարմար է: Արմկանց վրայ յեցեալ՝ լեցուն փողերը վրան ապակի անցուած փողփողացող բոցին կը մերձեցընեն: Այս գործողութիւնս ընելու համար պէտք է վարժ ըլլալ, եթէ կ'ուզուի որ կարգաւորեալ յաջողի: Եթէ գնդակը շուտով չի տաքնար՝ ալ չի կրնար այրիլ, ուստի եւ ծուխ ալ չ'ելլեր եւ հետեւաբար կորուսեալ է: Եթէ սաստիկ տաքցած է, իսկոյն կ'ուռի, փողի վառարանին փոքր ծակը կը խցուի եւ փոխանակ բաղձացուած ծխոյ՝ թունաւոր հիւթք կ'ելլեն, որոնց վրայ ստորեւ: Ուրեմն ծխողն բաւական վարժ պիտի ըլլայ եւ պիտի հասկնայ գիպող ու յարմար վայրկեանն որոշել: Բայց եթէ յաջողի՝ ճենացին մէկ կամ երկու շնչով շոգին ներս կը քաշէ, եւ յետոյ դուրս կը հանէ: Առաջին գնդակէն վերջը՝ երկրորդ մը կ'առնու, իսկ ափիոնի գերին՝ մէկ նստին 15—40 անգամ կը կրկնէ, ըստ որում առաւել կամ նուազ թմբեցուցիչ ազդեցութիւնն զգալ կը ջանայ, որ բնականաբար այնչափ աւելի երկայն կը տեւէ, որչափ որ յաճախ ափիոն ծխելով՝ զգայարանաց գրգիռը բթացած է: Կստէն ետեւ ափիոնի վառարանը հնդկեղէգէն կը հանուի եւ կը մաքրուի: Ածխացած եւ փոշենման մնացորդը՝ որ ափիոնի փողի գլխուն ներքին եզերացը վրայ կը կպչի, որ եւ Գիւսէ կը կոչուի, քիլոն 125 ֆրանքի կը ծախուի ստորին մարդիկներուն, զոր երկրորդ անգամ կը ծխեն: Երկրորդ անգամէն ալ մնացածը Սուշիէ կը կոչուի եւ աղքատաց կը ծախուի եւ կը կլուի, որովհետեւ ալ կրակ չի բռներ եւ հետեւաբար չի կրնար ծխուիլ:

Այնչափ անթիւ ու անհամար դժբախտութեանց մի միակ պատճառը՝ որոնց ոչ ցանցառ են թարկուած են ափիոն գործածողները, ցայսօր բնափիոնը համարուած է, որ իբր ափիոնի ալքոոլակերպ հիւթ՝ հանրածանօթ պատուական դեղ է. սակայն ըստ նորագոյն զննութեանց այս հասարակաց կարծիքը շատ ճիշդ չէ. եթէ Չանտուին լաւ տեսակէն է եւ չափազանց չի ծխուիր եւ եթէ 250 աստիճանէն աւելի չէ ջեռուցուած՝ այն ատեն դոյացած շո-